ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

29 հունվարի 2013 թվականի N 9-Ա

ք. Հրազդան

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Երզնկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Գոհարիկ Ավետիսյանին*** տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2013 թվականի փետրվարի 4-ից մինչև մարտի 4-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 628-Ա որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցը:

2. ***Գոհարիկ Ավետիսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Երզնկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ ***Տաթևիկ Գրիգորյանի***, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ ***Ասպոիկ Մարկոսյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ